

Արսեն Կ. Շահինյան
Պատմագիտության դոկտոր (Սանկր Պեպերբուրգ)

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ԻՐԱՆԻ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բյուզանդիայի հետ հակամարտության ավարտական փուլում
(Զ դարավերջ – Է դարասկիզբ)*

Բանալի բառեր – Վրաց մարզպանություն (Վարջան-Վիրուջան), Աղուանից մարզպանություն (Առան), բյուզանդապարսկական պատերազմներ, Վրաց իշխանություն (Քարթլի), Աղուանից իշխանություն, Քարթլիի էրիսմթավարներ, Աղուանից իշխաններ:

Մուտք

Սահմեդական արաբների նվաճումներին նախորդող բյուզանդա-պարսկական վերջին երկու՝ 572–591 և 603–628 թվականների պատերազմների արդյունքում Քրիստոնյա Արևելքի որոշ երկրների քաղաքական համակարգում, որը ձևավորվել էր 387-ին՝ Մեծ Հայքի թագավորության և ողջ Առաջավոր Ասիայի բաժանումից ի վեր, տեղի ունեցան կտրուկ փոփոխություններ: Ինչպես մեզ հաջողվել է պարզել, Բյուզանդական կայսրությանը Սասանյան Իրանի հետ հաշտության նոր պայմանագրերով (591 և 628 թթ.) Պարսից Հայքից բաժին ընկած տարածքներում գործող նախարարական ժողովը 631-ին հիմնեց «Իշխան Հայոց» ընտրովի ինստիտուտը, ապա պարտադրեց Կոստանդնուպոլիսին իրավական ձևակերպում տալ դրան¹:

Սակայն նմանատիպ գործընթացներ տեղի են ունեցել նաև Սասանյան

* Սույն հոդվածի հիմնադրույթները տպագրվել են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի «Հայաստանը և Արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը (12–13 դեկտեմբեր, 2016)» միջազգային գիտաժողովի զեկուցումների և զեկուցումների դրույթների ժողովածուում, Եր., 2016, էջ 194–203: Հոդվածն ընդունվել է տպագրության 13. 02. 2019:

¹ Տես **Շահինյան Ա. Կ.**, Հայոց ինքնավար իշխանության տարածքն ու սահմանները Է դարում, "Journal of the Society for Armenian Studies", N 20, 2011, էջ 55–68; տես նաև՝ **Շահինեան Ա.Կ.**, Է դարի Հայոց իշխանութեան ինքնիշխանացումը, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պեյրոյթ, հատ. ԼԳ, 2013, էջ 165–180:

Իրանի կազմում ձևավորված մյուս երկու քրիստոնյա մարզպանություններում՝ Վրաց (Վարջան-Վիրուջան) և Աղուանից (Առան), և ավելի վաղ, քան հարակից Հայքում: Սույն հողվածում քննելով Վիրքում ու Աղուանքում Զ-Է դարերի սահմանագլխին «Գահերեց իշխան» ազգային ինստիտուտի ծագումը, այն առաջին անգամ բնորոշվում է որպես Այսրկովկասի և Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան կողմերի վարչա-քաղաքական քարտեզին Բյուզանդական կայսրության հովանու ներքո գոյություն ունեցած և Սասանյանների կողմից Զ դարասկզբին վերացված պետական կազմավորումների վերածնունդ: Մեր նպատակն է նաև ձգգրտել դրանց առաջացման փաստացի (de facto) և իրավական (de jure) տարբերվերը, որոշել առաջին կառավարիչների՝ գահերեց իշխանների, ինքնիշխանության տարածման սահմանները: Ի դեպ՝ սրանց իշխանությունը, ի տարբերություն Բյուզանդական Հայքի, ժառանգական էր:

1. Վրաց ժառանգական իշխանություն

572-591 թվականների այսպես կոչված «Քսանամյա պատերազմը» պարսկական բանակի համար հիմնականում հաջողությամբ էր ընթանում: Իրավիճակը փոխվեց, երբ Բյուզանդիայի նախկին Արևելքի գերագույն ռազմական մագիստրոս (լատ. *Magister militum per Orientem*) Մորիկը, ով 582-ից կայսրերական գահին էր տիրացել, Թյուրքաց խաքանության ռազմական ուժերի հետ մեկտեղ լայնածավալ հարձակում ձեռնարկեց Իրանի դեմ: Ըստ սասանյան պատմագրության ավանդույթների, որոնք վերանշակված տարբերակներով պահպանվել են արաբագիր իրանցիներ՝ ադ-Դինավարիի (մահ. 895-ին) «Երկարապատում ավանդությունների մատյան»-ում (كتاب الأخبار الطوال [Kitāb al-Aḥbār at-Ṭiwāl]) և «Մահմեդական պատմահայր» ատ-Տաբարիի (923-838) «Մոզերի ու արքաների պատմություն»-ում (تاريخ الرسل والملوك [Tāriḥ ar-Rusul wa-al-Mulūk]), հակաիրանական կոալիցիոն ուժերի այս խոշոր հարձակումը թվագրվում է Պարսից արքայից արքա Հուրնուզի (նույն ինքը՝ Որմիզդ Դ-ն /590-579/) ժԱ տարում²: Ստացվում է 589-ի ամռանը, քանզի պատմագիտությանը հստակ հայտնի է, որ Որմիզդ Դ շահնշահի գահակալության տարեմուտը մարտի 7-ն է համարվում, իսկ 590-ի փետրվարի 6-ին նա արդեն գահընկեց է արվել³:

Մորիկն իր հովանու ներքո գործող կոալիցիայի կազմում ձգտում էր անհապաղ տեսնել նաև վրաց վերնախավի և կովկասյան որոշ ցեղապետերի ռազմական ուժերը: Այդ պատճառով նա շտապում է վերանայել կովկասյան ուղղությամբ Կոստանդնուպոլսի արտաքին քաղաքականության հայեցակարգը՝ ընդլայնելով Բյուզանդիայի գերիշխանության սահմանները 387-ին Քրիստոնյա Կովկասից և Մեծ Հայքից Տիգրանին բաժին հասած աշխարհների հաշվին: **Սույն ենթաբաժնում խոսքը կգնա շահնշահի վարչակազմի կողմից 523-ին վերացված՝ Քարթլիի կախյալ թագավորության տարածքից Բյու-**

2 Տե՛ս **Abu Hanifa ad-Dinaweri**, *Kitab al-Aḥbar at-tiwāl*, publié par V. Guirgass, Leiden, 1888 (كتاب الأخبار الطوال تأليف أبو حنيفة) (أحمد بن داود الدينوري تصحيح ف. جرجاس. ليدن، ٨٨٨)، p. 81; *Annales quos scripsit Abu Djafar Mohammed ibn Djarir at-Tabari* (تاريخ الرسل والملوك لأبي جعفر محمد ابن جرير الطبري، cum aliis ed. M. de Goeje, ser. I-III, Lugduni Batavorum, 1879-1901, ser. I, p. 991 (այսուհետև՝ **at-Tabari**):

3 Տե՛ս **Higgins M.J.**, *The Persian War of the Emperor Maurice (582-602), Part I: The Chronology, with a Brief History of the Persian Calendar*, Washington, 1939, p. 24-26:

զանդիայի սահմաններին անմիջապես հարող Տփղիս (Թբիլիսի) կենտրոնով ձևավորված Վրաց կամ Վարջանի (պահլ. Wiručān) մարզպանության վերաբերյալ, որն, ի դեպ, 387-ից հետո ընդգրկում էր նաև Մեծ Հայքի հյուսիսային Գուգարաց աշխարհը:

Ինչպես հետևում է վրաց միջնադարյան պատմագրության հայտնի ժողովածուի՝ «Քարթլիս ցխովրեբա»-ի հնագույն մատենագրքերից (մասնավորապես՝ ԺԱ դարի Ջվանշեր Ջվանշերյանի «Պատմություն Վախթանգ Գորգասալի» և Դավիթի որդի Սմբատի «Պատմություն և տեղեկանք Բագրատունիների»)՝ Մորիկը շտապեց բյուզանդական հիերարխիայի բարձրաստիճան «կուրապաղատ» տիտղոսը⁴ շնորհել Գվարամ Ա-ին: Նա Վիրքում մինչև 523-ը իշխող Խոսրովյան արքայատոհմի թագավոր Վախթանգ Ա Գորգասալի (446^o-502^o)⁵ թոռն էր, ով (Գուգարաց աշխարհի) Կղարջք (Կղարջեթի) ու Ջավախք (Ջավախեթի) գավառների ժառանգական տիրակալն էր, իսկ մի քանի տարի առաջ Տփղիսում ընտրվել էր «Առաջինը հավասարների մեջ» (լատ.՝ primus inter pares), այլ կերպ ասած՝ գահերեց իշխան (հին վրաց.՝ յրօնծօնցարօ [ērismt‘avari], բառացի՝ «մարդկանց գլուխ»): Տիտղոսի շնորհում կայսեր կողմից, ինչպես որ նույն մատենագրքերի համատեքստերից է հետևում, տեղի ունեցավ վրաց իշխանների (հին վրաց.՝ յրօնծօնց [ērist‘avi], բառացի՝ «ժողովրդի գլուխ») պաշտոնական դիմումին ընդառաջ⁶ և Սասանյան Իրանի դեմ նրա ձեռնարկած լայնածավալ հակահարձակման ժամանակաշրջանում⁷:

Ստացվում է, որ մեր տրամադրության տակ ունենք Գվարամի կուրապաղատ դառնալու հստակ տարեթիվը՝ 589:

Հետաքրքրական է, որ մինչև Գվարամի գահերեց իշխան ընտրվելը Տիգրանից Տփղիս ուղարկվող սասանյան վարչակազմի բոլոր ներկայացուցիչները, ըստ «Վրաց դարձ» հայտնի երկի անհայտ վրաց հեղինակի (հավանական է՝ Թ դար)⁸, Վիրքի վերոհիշյալ Վախթանգ Գորգասալ Խոսրովյան արքայի ուղիղ ժառանգներ էին: Այդ իսկ պատճառով անանուն ժամանակագիրը դրանց բոլորին ժառանգական արքաներ է կոչում: Նրանցից առաջինը Վախթանգի թոռ Բակուրն էր, ապա՝ նրա որդի Փարսմանը, ապա վերջինիս եղբորորդի սյուս Փարսմանը, ով, ըստ Ջվանշեր Ջվանշերյանի, կառավարեց

4 «Կուրապաղատ» տիտղոսը բաղադրյալ եզրաբառ է, որը ծագում է լատիներեն **curare** (բառացի՝ «խնամել») և **palatium** (բառացի՝ «արքունիք») բառերից:

5 Ըստ վրացական պատմագրության ավանդույթների՝ Խոսրովյանի (Խոսրովյան) արքայատոհմի հիմնադիր Միրիան Գ-ն (284/318-360/1) սասանյան շահնշահի որդին էր: Վրաց և Հայոց արքայատոհմերի ծագումնաբանության ուսումնասիրություններով հայտնի ամերիկացի Կիրիլ Թունանովը պարզել է, որ այդ Խոսրովյանները Պարթևստանի յոթ խոշոր ազնվական տներից մեկի, ամենայն հավանականությամբ՝ Միրիանի (պահլ.՝ **Mihran**), բազմաթիվ ճյուղերից մեկն էին (**Toumanoff C. L.**, *Chronology of the Early Kings of Iberia*, «Traditio», 1969, vol. 25, p. 22): Հավելենք միայն, որ վերջիններիս սերունդներին կհանդիպենք հաջորդ ենթաբաժնում, որպես Աղուանքի ժառանգական իշխաններ:

6 Տե՛ս չշաճմբռ, ցեօջրեճ ճեճեճ ճոճջեճեճ, «Ջերտլօն ցեօջրեճ», 1-2, և. ցաջեճիճջեճ ցեճջեճ (Ջուանշերի, Վախթանգ Գորգասալի պատմություն, «Քարթլիս ցխովրեբա», 1-2, հրատ. Ս.Կաուխչիճվիլիի), Թբիլիսի, 1955-1959, հատ. Ա., էջ 217-218 (այսուհետև՝ **Ջուանշերի**); ևլճճճ ճեճեճ-ճց. ցեօջրեճ ճա շլլլլլ ճաջրեճ ճաջրեճ, «Ջերտլօն ցեօջրեճ», 1-2, և. ցաջեճիճջեճ ցեճջեճ (Սումբաթ Դավիթիս-ձե, Պատմություն և տեղեկանք Բագրատունիների, «Քարթլիս ցխովրեբա», 1-2, հրատ. Ս.Կաուխչիճվիլիի), Թբիլիսի, 1955-1959, հատ. Ա., էջ 373-374 (այսուհետև՝ **Սումբաթ Դավիթիս-ձե**): Առաջին մատենագիրը Վրաց (Քարթլի) գահերեց իշխանի պաշտոնը կոչում է նաև «գլխավոր էրիթալ» (տե՛ս **Ջուանշերի**, էջ 222): Հավելենք, որ գոյություն ունի վերջինիս հայերեն թարգմանությունը (տե՛ս Համառոտ պատմություն Վրաց ընծայեալ Ջուանշերի պատմիչի, Վենետիկ, 1884, 137 էջ):

7 Տե՛ս **Ջուանշերի**, էջ 219-220:

8 Այս գրական հուշարձանը, որը մեզ է հասել ԺԱ-ԺԲ դարերի խմբագրությամբ, վարքաբանական ժանրից է, չնայած նրանում տեղ գտած պատմագրական հարուստ նյութերին: Այն հայտնի է նաև «Վարք Սուրբ Նինոյի» (ցեօջրեճ ճիճեճ ճեճեճ [C'xovreba Cminda Ninos]) խորագրով:

մինչև որ լրացավ (ծանոթագրություններում հիշատակված) արքա Միրիան Գ-ի թագադրման ՄԾ տարին⁹, այսինքն՝ մինչև 534 կամ 568-ը: Վերջապես, թագավորեց մյուս Փարսմանի որդի (մյուս) Բակուրը¹⁰:

Բյուզանդական կայսրության կովկասյան սահմաններից դուրս գտնվող Վիրքի հանդեպ տարվող քաղաքականության հայեցակարգի վերանայումը թույլ տվեց Միրիկին վրաց վերնախավի ռազմական ուժերը և հյուսիսկովկասյան գորախմբերը լայնորեն ներգրավել ծանր ու դժվար ընթացող պարսկական «Քսանանյա պատերազմում»: Զվանշեր Զվանշերյանը, օրինակ, գրում է, որ Գվարամ կուրապաղատը համաձայնեց և իր ակտիվ մասնակցությունը բերեց հակաիրանական կոալիցիայի ռազմական գործողություններին՝ Հյուսիսային (Կովկասի) գորագնդերի հետ միասին ներխուժելով ու ժամանակավորապես ասպատակելով Ադարբադագանը (պահլ. *Ādurbādagān*)՝ Ատրպատականի մարզպանությունը¹¹:

Մեծ Հայքում 591-ին Կոստանդնուպոլսի և Տիգրանի միջև նոր սահմանագատմամբ Բյուզանդիան, 645-ի Դվինի Դ եկեղեցածողովի հավանական մասնակցի՝ Սեբեոս եպիսկոպոսի վկայությամբ, ստացավ ոչ միայն Պարսից Հայքի (Հայոց մարզպանության (պահլ.՝ *Arminān*)) զգալի տարածքներ Այրարատում, Աղձնիքում, Տայքում ու Տուրուբերանում¹²: Պարսից Խոսրով Բ Փարվեզ¹³ արքան (590–628) Միրիկ կայսրին, պատմիչի պնդմամբ, «ետ և զմեծ մասն Վրաց աշխարհին մինչև ցՏիխիս քաղաք»¹⁴: Վրաց (Վարջան) մարզպանության զգալի հատվածի գիջման օգտին են անուղղակիորեն վկայում նաև Զվանշեր Զվանշերյանի հետևյալ տողերը՝ «...Մավրիկիոսը հոգ տարավ վրացիների հանդեպ՝ Քասրեի առջև՝ ասելով. «Այն պահից երբ վրացիները հրաժարվեցին կռապաշտությունից, նրանք գտնվում էին հույների հպատակության տակ: Քանի որ Քարթլին ձեր տիրապետության ժամանակ ավերվեց, դուք այլևս իրավունք չունեք նրա հանդեպ: Արդ, երբ ես և դու Աստծո կամոք գտնվում ենք փոխադարձ սիրո մեջ, թող Քարթլին մնա ազատ մեզանից և խաղաղ. ես դաշնակիցն եմ և հոգաբարձուն բոլոր վրացիների և բոլոր քրիստոնյաների»: Ապա, Պարսից արքան ենթարկվեց կայսրին, իսկ վրացիները ազատություն ձեռք բերեցին»¹⁵:

Որպեսզի հնարավոր լինի պարզել Վիրքում «գահերեց իշխան» ինստիտուտի ձևավորման և, համապատասխանաբար, Այրկովկասի և Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան կողմերի քաղաքական քարտեզին Բյուզանդիայի հովանու ներքո առաջին ինքնավար իշխանության ծննդյան փաստացի ժամկետը, հարկավոր է ներկայացնել Վրաց կաթողիկոսների կառավարման համաժամանակյա ժամանակագրությունը: Համենայն դեպս, հենց այս-

9 Տես **Զուանշերի**, էջ 215:

10 Տես Յուզեջյան, «Վանդակի ճանապարհ», 1-2, և. Գյուլբեյջյանի զեմոցեմ (այսուհետև՝ Սոքցկայ Քարթլիսայ, ինձ «Քարթլիս Յիտվերթա», 1-2, հրատ. Ս. Կառլաչիշվիլիի), Թբիլիսի, 1955-1959, հատ. Ա, էջ 72-138: Հմն. նաև «Վախթանգ Գորգասալի պատմություն»-ում այս արքաների, ավելի միշտ՝ մարզպանների, պրոտոպոգրաֆիկ տեղեկությունների հետ՝ **Զուանշերի**, էջ 206-217:

11 Տես **Զուանշերի**, էջ 219-220:

12 Նոր սահմանագատման վերաբերյալ մանրամասն տես **Шагинян А. К.**, Армения и страны Южного Кавказа в условиях византийско-иранской и арабской власти, «Византийская библиотека. Исследования», СПб., 2011, с. 62-63, 66-68:

13 Պահլ.՝ *Aparvēz*, բառացի՝ «Հաղթող»:

14 **Պատմություն Սեբեոսի**, «Մատենագիրք Հայոց, հատ. Գ (Է դար)», Աթիլիսա, 2005, էջ 486 (այսուհետև՝ **Սեբեոս**):

15 **Զուանշերի**, էջ 221:

պես են վարվում Վիրքի վաղ միջնադարի պատմիչները: Ահա, համաձայն «Վրաց դարձ»-ի անանուն հեղինակի տեղեկությունների՝ Գուարամ Ա կուրապաղատան իշխել է (Վրաց) Սամեղ Դ (582–591) և Բարթոլոմե (591–595) կաթողիկոսների օրոք¹⁶: Իսկ ըստ Ջվանշեր Ջվանշերյանի և Դավիթի որդի Սմբատի՝ նա սկսել է իր կառավարումը դեռ Սվիմոն (569–575) և Սամեղ Գ (575–582) կաթողիկոսների ժամանակներում և նոր միայն իշխել Սամեղ Դ-ի օրոք¹⁷:

Տեղական աղբյուրներում նմանատիպ տարածայնությունների առկայությունը, ըստ մեզ, առաջացել է այն պատճառով, որ առաջին վրաց հեղինակը Գվարամի իշխանության սկիզբ է ընդունում վերջինիս պաշտոնական հաստատումը Մորիկի կողմից 589-ի կեսին, մինչդեռ մյուս երկուսն իշխանության սկիզբն են ընդունում նրա ընտրության պահը էրիսթավների կողմից 571-ին կամ 572-ին: Բանն այն է, որ վրաց ժամանակակից պատմագրության մեջ էրիսթավների առաջին ժողովի գումարումը վաղուց է շաղկապվում 571–572 թթ. Սասանյանների կողմից հերթական անգամ կրոնափոխության պարտադրման քաղաքականության դեմ Հայոց մարզպանությունում Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ բռնկված ապստամբության հետ, որին միացան նաև վրացիները¹⁸, ինչի արդյունքում էլ քրիստոնյա Բյուզանդիան զրադաշտական Իրանին պատերազմ հայտարարեց: Հավելենք նաև, որ վրաց անանուն ժամանակագրի հետևյալ խոսքերը՝ «**[Սկզբում – Ա. Շ.] Գվարամին դրեցին էրիսթավ, ապա նոր՝ կուրապաղատ**»¹⁹, ուղղակիորեն հաստատում են մեր տեսակետն առ այն, որ Գվարամի իշխանության փաստացի (իշխանական ժողովի կողմից ընտրվելու միջոցով) ու իրավական (կայսեր կողմից հաստատվելու միջոցով) ձևակերպումները հարկավոր է իրարից հստակ տարանջատել, քանզի դրանք տարբեր ժամանակներում են տեղի ունեցել:

Հետաքրքրական է նշել նաև, որ Ատրի Հակոբիկյան եկեղեցու Եփեսոս քաղաքի եպիսկոպոս Հովհաննի (մոտ. 507–586) «Եկեղեցական Պատմությունում» «Պարսկական հայերի մասին, որոնք հոռոմներին հանձնվեցին» խորագրով Զ գրքի ԺԱ գլխում՝ Վարդանի (Մամիկոնյանի) գլխավորությամբ ապստամբած հայերին միացած հարևան (վրաց) ազգի առաջնորդ-իշխանի անունն էր Գորգոնիս²⁰: Դա, անկասկած, իրանական ծագում ունեցող Գուրգեն (պահլ. **Gurgēn**) հատուկ անվան ասորերեն աղավաղված տարբերակն է, ինչը հաստատվում է նաև դրամագիտական տվյալներով: Հինա հավելենք միայն, որ դեռ Կիրիլ Թումանովն էր արդարացիորեն ենթադրում, որ Գուրգենը Գվարամ Ա-ի միջազգային ասպարեզում կիրառվող գահական անունն էր²¹, իսկ դա նույնպես փաստում է, որ էրիսթավար Գվարամը՝ նախկին Սասանյան Պարսկաստանի հպատակը, համեմատաբար ուշ հաստատվեց իր պաշտոնում Մորիկ կայսեր կողմից:

591-ին՝ Մեն Հայքի և հարակից կովկասյան տարածաշրջանի երկրորդ բաժանումից հետո, Բյուզանդիան, մեր հաշվարկով, տիրացավ Վրաց (Վարջան)

16 Տե՛ս ԹովցցՅՅՅՅ յճճԹԹԹԹԹԹ, էջ 72–138:

17 Տե՛ս **Ջուանշերի**, էջ 221–222; **Սումբաթ Դավիթիս-ձե**, էջ 373–374:

18 Տե՛ս **Бердзенишвили Н. А., Дондуа В. Д.**, Грузия в VI в., «Очерки Истории СССР, т. 2: Кризис рабовладельческой системы и зарождение феодализма на территории СССР (III–IX вв.)», М., 1958, с. 261:

19 ԹովցցՅՅՅՅ յճճԹԹԹԹԹԹ, էջ 72–138:

20 Տե՛ս Եփեսոսի Հովհանն եպիսկոպոսի եկեղեցական պատմություն, «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին», հատ. 8, Ատրաքան աղբյուրներ, հատ. Ա, թարգ. Հ. Գ. Մելքոնյանի, Եր., 1976, էջ 430–431:

21 Տե՛ս **Toumanoff C. L.**, Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, p. 434:

մարզպանության գերակշիռ հատվածին՝ 26.657 քառ. կմ մակերեսով՝ ներառյալ Մծխեթան²²: Մենք համամիտ չենք ակնաավոր քարտեզագիր Բաբկեն Հարությունյանի այն կարծիքին, թե Մծխեթան մնաց Սասանյան Պարսկաստանի կազմում²³: Մենք նույնիսկ համոզված ենք, որ դեպի հյուսիս-արևմուտք՝ անտիկ շրջանի Վիրքի (հին հուն․՝ **Ίβηρία**, լատ․՝ **Hiberia**) քաղաքամայր պետք է որ Տփղիսից տեղափոխված լիներ Մորիկ կայսեր նոր հպատակի՝ Գվարամի իշխանական աթոռը: Չէ որ Սերէոսի մեջբերված խոսքերից հստակ երևում է, որ Բյուզանդիայի իրանական սահմանի վրացական հատվածը 591-ին ձգվեց մինչև Տփղիսի արվարձանները: Մեր տեսակետի օգտին է նաև Ջվանշեր Ջվանշերյանի հետևյալ գրառումը. «...**Գվարամին կայսրը շնորհեց կուրապաղատի աստիճան և ուղարկեց Մծխեթա**»²⁴: Մծխեթա, և ոչ թե Տփղիս, որը, ի տարբերություն առաջինի, մնաց Սասանյան Իրանի կազմում: Ավելին, ինչպես ցույց կտանք ստորև, Գվարամին հաջորդող կառավարչի՝ նրա որդու վերաբերյալ նույն այս վրաց մատենագիրը կգրի, թե նա «...**իշխում էր ամբողջ Քարթլիում, և նստեց Թբիլիսիում**»:

Լիովին տրամաբանական է ենթադրել նաև, որ Տփղիսում 591-ից հետո պետք է որ պահպանված լիներ մարզպանական վարչակազմի ղեկավարի նստավայրը: Սակայն մեր բոլոր ջանքերը՝ «Քարթլի Ցխովրեբա»-ում գտնել Վարջանի վերջին մարզպանների անուններն, որի տարածքը 591-ից հետո սահմանափակվեց 10.355 քառ. կմ մակերեսով²⁵, ի դերն ելան:

Գվարամ Ա-ին հաջորդեց, ինչպես որ վրաց մատենագիրներն են նշում, նրա որդին՝ Ստեփանոս Ա Մեծը: Միաժամանակ «Վրաց դարձ»-ի հեղինակը, ապա սրան հետևող Դավիթի որդի Մմբատը գրում են, որ նա իշխեց միայն մեզ արդեն հայտնի Բարթլումն (591-595) կաթողիկոսի օրոք²⁶, իսկ ըստ Ջվանշեր Ջվանշերյանի՝ նա սկսում է իշխել արդեն հայտնի Սամոել Դ-ի (582-591) օրոք²⁷: Սակայն, ինչպես նույն այս հեղինակների գրած համատեքստերից է հետևում, Ստեփանոսը գոյատևեց ոչ միայն Մորիկ կայսեր ժամանակաշրջանում, այլև նրան հաջորդող Փոկասի (602-610): Ավելին՝ 603-628 թթ. այսպես կոչված «Քսանհինգամյա պատերազմի» ընթացքում, երբ պարսից Քասրե Ամբարվեցը (Խոսրով Բ Փարվեզը) հույների դեմ փայլուն հաղթանակներ գրանցեց, գերելով անգամ սուրբ քաղաք Երուսաղեմը, Ստեփանոսն այս անգամ շտապեց ճանաչել նրա գերիշխանությունը:

Տվյալ պարագայում էրիսմթավարը հնարավոր գտավ իր իշխանության ներքո վերամիավորելու Վիրքի և բյուզանդական, և պարսկական հատվածները: Մեկ միացյալ ինքնավար կազմավորումը վերականգնեց 37.012 քառ. կմ տարածքը և իշխանական աթոռը Տփղիս քաղաքում: Այս հաշվով

22 Տե՛ս **Шагинян А. К.**, указ. соч., с. 67-68: Հարկ է նշել, որ Վրաց (Վարջան) մարզպանության ընդհանուր մակերեսը մինչև 591-ը, ակադեմիկոս Սուրեն Երեմյանի ճշգրտմամբ, կազմում էր 37.012 քառ. կմ **Երեմյան Ս. Տ.**, «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրման հիմքի վրա), Եր., 1963, հավելված Բ, էջ 116-120:

23 Տե՛ս **Հարությունյան Բ. Հ.**, Հայաստանի պատմության Ատլաս (Ա. մաս), («Հայաստանը Բյուզանդական կայսրության ու Սասանյան Պարսկաստանի թուլացման շրջանում և արաբական արշավանքների նախօրյակին»), Եր., 2004, էջ 54-55:

24 **Ջուանշերի**, էջ 218:

25 Նման մակերես մենք ստանում ենք՝ Վրաց (Վարջան) մարզպանության ընդհանուր մակերեսից (37.012 քառ. կմ) հանելով Բյուզանդիային բաժին հասած 26.657 քառ. կմ-ը:

26 Տե՛ս **Յոյճջջո յճճոլոսո**, էջ 72-138; **Սումբաթ Դավիթիս-ձե**, էջ 375:

27 Տե՛ս **Ջուանշերի**, 222:

էր Զվանշեր Զվանշերյանին գրում. «**Իսկ Ստեփանոսը իշխում էր ամբողջ Քարթլիում, և նստեց Թբիլիսիում, և հպատակվեց պարսիկներին**»²⁸:

Ստեփանոսի կողմից Վիրքի երկու հատվածների վերամիավորումը Խոսրով Փարվեզի գերիշխանության ներքո կարող էր տեղի ունենալ 614-ի մայիսի 20-ից հետո, երբ պարսիկների կողմից գերվեց Երուսաղեմը: Այսպիսի թվագրում է տրված մի վաղ բյուզանդական գրական հուշարձանում, որը պատմագրության մեջ առավել հայտնի է «Երուսաղեմի գերությունը պարսիկների կողմից 614-ին» (Άλωσις τῆς Ἱερουσαλήμ ὑπὸ τῶν Περσῶν τῷ 614) խորագրով²⁹ և պատկանում է դեպքերի անմիջական մասնակցի գրչին՝ արաբական ծագումով, սակայն մկրտված Անտիոքոս Ստրատեզոս անունով³⁰:

Վրաց էրիսմթավարի քաղաքական քայլերին ի պատասխան, ինչպես որ վրաց մատենագիրներն են պնդում, նոր կայսր Էրակլը, որ նույն ինքը Հերակլ Ա-ն է, պարսկական ողջ ճակատով թուրքերի, ավելի ձիշտ՝ թուրքախոս խազարների հետ հակահարձակման ընթացքում կատարում է պատժիչ արշավանք դեպի Վիրք (Քարթլի): Արդյունքում, Տփղիսի պարիսպների տակ մարտի ժամանակ մահացու հարված է ստանում նաև Ստեփանոսը³¹:

Է դարի առաջին կեսին Անանուն Կաղանկատուացին՝ Աջափնյա Աղուանքից, իր հեղինակած «Վիրոյ կաթողիկոսի Պատմութիւնում» այս պատժիչ արշավանքը թվագրում է Խոսրով (Փարվեզ) արքայից արքայի կառավարման ԼԸ տարով³²: Ստացվում է մոտ 627-ին, քանզի շահնշահի գահակալման տարեմուտն է փետրվարի 15-ը³³: Այնպես որ, եթե մեր տրամադրության տակ չունենք Ստեփանոսի ընտրության և հաստատման ճշգրիտ տարեթիվը, փոխարենն ունենք նրա մահվան ստույգ ժամանակը:

Իր արտաքին քաղաքական կողմնորոշումը փոխելու արդյունքում Ստեփանոսը ոչ միայն սեփական կյանքից զրկվեց, այլև շատ կարևոր հնարավորությունից՝ իշխանությունը ժառանգաբար փոխանցելու որդուն: Զվանշեր Զվանշերյանի տվյալներով՝ Հերակլը (Էրակլ) նշանակեց կամ էլ հաստատեց Վիրքի (Քարթլի) նոր էրիսմթավար՝ Ադարնասեին, նստավայրը՝ Տփղիս: Նա Գվարամի Դաչի անունով քեռու սերնդից էր, որոնք Կախեթիի ժառանգական տիրակալներն էին³⁴:

Հերակլը, իհարկե, պետք է որ համաձայներ, որպեսզի վրաց էրիսմթավարները նախապես ձևական ժողով գումարեին՝ ընտրելու Ադարնասե Խոսրովյանին և ներկայացնեին իրեն հաստատման համար, ինչպես տեղի ունեցավ առաջին գահերեց իշխան Գվարամի դեպքում: Սակայն վրաց աղ-

28 Նույն տեղում, էջ 223:

29 Այս հուշարձանի ամբողջական խմբագրությունը մեզ է հասել միայն դասական վրացերեն թարգմանությամբ՝ «წარტყუეფვა» «გერუსალემისაო» [Cartquenvao Ierusalemisao], իսկ քաղվածքներն այնտեղից՝ արաբերեն թարգմանությամբ՝ «Հաղորդություն Երուսաղեմի ավերման վերաբերյալ» (خبر خراب بيت المقدس [Habar harāb bayt al-Maqdis]):

30 Հեղինակի մի տվյալով՝ պարսիկները սկսեցին պաշարել Երուսաղեմը կայսր Հերակլ Ա-ի (610–641) կառավարման Դ տարում, ապրիլի 15-ին, իսկ գրավեցին այն պաշարման ԻԱ օրը: Ստացվում է 614-ի մայիսի 5-ը (տե՛ս **Антиох Стратиг**, Пленение Иерусалима персами в 614 г. / Груз. текст исследовал, издал, перевел и арабск. извлечение приложил Н. Марр, СПб., 1909, с. 15–16 и 15; հմմ. նաև՝ **Арабское извлечение из «Истории разрушения Иерусалима персами в 614 г.»**, **Антиох Стратиг**, с. 4): Մյուս տվյալով՝ որը տրված է հենց վերագրում, սուրբ քաղաքի գրավումը պարսիկների կողմից տեղի ունեցավ մայիսի 20-ին:

31 Տե՛ս **მთქცევთა ქობოლთაო**, գլ. Ա., էջ 72–138; **Զուանշերի**, էջ 222–224; **Սումբաթ Դավիթիս-ձե**, էջ 374–375:

32 Տե՛ս **Անանուն Կաղանկատուացի**, Վիրոյ կաթողիկոսի պատմութիւն, «Մատենագիրք Հայոց, հատ. Գ (Է դար)», Աթիլիաս, 2005, էջ 387, 390:

33 Տե՛ս **Higgins M.J.**, նշվ. աշխ., էջ 26–31:

34 Տե՛ս **Զուանշերի**, էջ 225:

բյուրներում դրա վերաբերյալ անգամ ակնարկ չգտանք: Աղուանքից ևս մեկ հայազգի անանուն հեղինակի «684 թուականի պատմութիւն» պայմանական խորագրով երկի վկայություններից տեղեկանում ենք, թե «**մեծապատիւ այրն Ատրնէրսեհ՝ իշխան Վրաց. – Ա. Շ.] աշխարհին, ... երբեակ իշխանութեան գահերիցութիւն ի Հռովմայեցոց թագաւորութենէն ունէր**»³⁵: Բայց թե որոնք էին կայսեր կողմից շնորհված այդ երեք բարձրաստիճան տիտղոսները անանուն մատենագիրը, ցավոք, չի ձշտում:

Տրամաբանական է ենթադրել, որ 628 թ. մարտի 28-ի խաղաղության պայմանագրով³⁶ Բյուզանդիայի և Իրանի միջև մինչպատերազմական սահմանների վերականգնումից հետո, ինչի մասին է վկայում Սեբեոսը՝ գրելով թե՛ «...սահման հաստատեցաւ նոյն՝ որ առ Խոսրովաւ և Մարկաւ հաստատեալ էր»³⁷, Ադարնասեի նստավայրը պետք է որ Տփղիսից տեղափոխված լիներ Մծխեթա: Բանն այն է, որ 591-ի հաշտությամբ Տփղիսը մնում էր իրանական Վրաց (Վարջան) մարզպանության սահմաններում: Այդպիսով՝ Վիրքի ինքնավար իշխանության տարածքը դարձյալ պետք է որ սահմանափակվեր Բյուզանդական Իբերիայի հատվածով՝ կազմելով 26.657 քառ. կմ:

Երեք վրաց մատենագիրները միաձայն պնդում են, թե Ադարնասեն իշխել է Վրաց երեք կաթողիկոսների օրոք: Դրանք էին՝ Իոանես Բ-ն (610–619), Բաբիլյան (619–629) և Թաբրոբին (629–634)³⁸: Սակայն երեք եկեղեցապետների առաջինի օրոք Ադարնասեն չէր կարող իշխել, քանզի նրան նախորդող Ստեփանոս Ա-ի իշխանական գահը զբաղեցված էր, ինչպես պարզեցինք, մինչև իր մահը՝ 627-ին: Միաժամանակ նշենք, որ ինչպես ցույց կտանք ծանոթագրություններում, հղում կատարելով «684 թուականի պատմութեան» անանուն հեղինակին, Ատրնէրսեհը (Ադարնասեն) նույն կարգավիճակում է մնում առնվազն մինչև 636–637 թթ. ձմեռը:

Իշխանական գահին նրան հաջորդեց որդին՝ Ստեփանոս Բ-ն, ով, ըստ «Վրաց դարձ»-ի, կառավարել է Սամոել Ե (634–640) և Եվմոսի (640–649) կաթողիկոսների օրոք³⁹: Ցավոք, Ջվանշեր Ջվանշերյանին չի ամրագրում վրաց եկեղեցապետների կառավարման համաժամանակյա ժամանակագրությունը⁴⁰:

Կաթողիկոսների համաժամանակյա ժամանակագրությունը չի առաջարկվում մեզ նաև դասական վրացերենով մյուս երկու գրավոր հուշարձաններում, երբ դրանց հեղինակները շարադրում են Ստեփանոս Բ-ին հաջորդած Էրիսմթավարների մասին: Բացի այդ՝ նշված շարադրանքներում մենք հանդիպեցինք շատ լուրջ տարածայնությունների Էրիսմթավարների հաջորդող ցուցակներում: Հայտնաբերում ենք նաև հստակ բաղարկություններ և մեծ թվով ժամանակավրեպություններ:

Օրինակ՝ «Վրաց դարձ»-ում Ստեփանոս Բ-ի անմիջական հաջորդողների շարքում թվարկվում են Գվարամ Բ կուրապաղատը, Գվարամ Գ Երիտասար-

35 Անանուն, 684 թուականի պատմութիւն, «Մատենագիրք Հայոց, հատ. Ե (Է դար)», Ալեքիլիաս, 2005, էջ 814:

36 Խաղաղության պայմանագրի ստորագրման ճշգրիտ ամսաթիվը վերականգնվում է բյուզանդացի Թեոփանես Խոստովանողի (մոտ. 760–818) ժամանակագրության հիման վրա (տես Theophanis Chronographia, "Corpus Scriptorum Historiae Byzantinae", ed. I. Classeni, Bonnæ, 1839–1841, pars I, p. 501–503):

37 Սեբեոս, էջ 525:

38 Տես Յոյճեցճո յճրտոլոսո, էջ 72–138; Զուանշերի, էջ 227; Սումբաթ Դավիթիս-ձե, էջ 375:

39 Տես Յոյճեցճո յճրտոլոսո, էջ 72–138; հմմ. նաև Սումբաթ Դավիթիս-ձե, էջ 375:

40 Տես Զուանշերի, էջ 228:

դը, Արշունչա կուրապաղատը, Վարագ Բակուր անտիպատրիկը, Ներսեն, ապա վերջինիս բազմաթիվ որդիները՝ Փիլիպեն, Ստեփանոս Գ-ն, Ադարնասե Բ-ն և ուրիշներ⁴¹: Դավիթի որդի Սմբատն այս ցուցակից բացառում է երկուսին՝ Գվարամ Գ Երիտասարդին և Արշունչա կուրապաղատին⁴²: Զվանշեր Զվանշերյանը գրում է, որ Ստեփանոս Բ-ին հաջորդեցին միաժամանակ երկու որդիները՝ Արչիլն ու Միհրը⁴³: Եղբայրներից ավագը վրաց հայտնի տիրակալ իշխան (հին վրաց. მთავარი [mt'avar], բառացի՝ «գլխավոր, ավագ») Արչիլն է, ով, Նիկողայոս Ադոնցի ձգբրտմամբ, նահատակվել է նկարագրվող դեպքերից ավելի քան մեկ դար անց՝ 786-ին⁴⁴:

Ցավոք, այս ամենի պատճառով վրաց գահերեց իշխանների՝ Երիսմթավարների կառավարմանը հաջորդող ժամանակագրությունը չի կարող ենթարկվել գիտական պատմագրությունում վերարտադրության՝ բացառությամբ որոշ դեպքերի:

Սերբեոս Եպիսկոպոսի վկայությամբ՝ Հայոց գահերեց իշխան, 652-ից ի վեր Արարական խալիֆայության հպատակ, Թեոդորոս Ռշտունու մահվանից անմիջապես հետո, ինչը մենք թվագրում ենք 659-ով⁴⁵, հայոց իշխաններն ու գորքը Համագասպ Մամիկոնեանի (մոտ. 659–662) գլխավորությամբ «...հապճեպ երթնելով հնագանդեցան ի ծառայութին թագաւորին Յունաց, հանդերձ միաբանութեամբ իշխանացն և զարացն Աղուանից...»⁴⁶:

Տվյալ համատեքստում չենք բացառում, որ Հայքի ու Աղուանքի օրինակով կարող էր շարժվել նաև մեզ հետաքրքրող Վիրքը: Կարծում ենք դա էր պատճառը, որ «Վրաց դարձ»-ի անանուն հեղինակի և նրան հետևող Դավիթի որդի Սմբատի վկայությամբ, ինչպես որ ցույց տվեցինք, Ստեփանոս Բ Մեծին հաջորդած Երիսմթավար Գվարամ Բ-ն բյուզանդական «կուրապաղատ» բարձրաստիճան տիտղոսով էր շնորհված ճիշտ այնպես, ինչպես ժամանակին Գվարամ Ա-ն: Գվարամ Բ-ն պետք է որ իշխեր Վրաց կաթողիկոս Թավփեչագ Բ-ի օրոք (649–664), քանզի նրան նախորդող Ստեփանոսն իշխել էր Սամոել Ե (634–640) և Եվնոսի (640–649 թթ.) եկեղեցապետերի ժամանակաշրջաններում:

Հավելենք, որ մեզ հայտնի է Վրաց ձևավորվող պետականության ևս մեկ կարևորագույն հատկանիշ. Վիրքի Երիսմթավարներն առաջին անգամ վրաց բազմադարյա պատմության ընթացքում սկսեցին արծաթից թողարկել այսպես կոչված «վրաց-սասանյան դրահիմաներ»: Դրամագետների տրամադրության տակ են այդպիսի արծաթե մետաղադրամների շուրջ քառասուն նմուշներ: Դրանց վրա բացի զրադաշտական խորհրդանիշերից պատկերված է քրիստոնեական խաչ: Կան նաև հիմնականում առաջին երկու Երիսմթավարների անուններով հապավումներ, որոնք գրված են դասական վրացերեն ասումթավրուլի (սեռմտავრული — բառացի՝ «մեծատառեր») կամ մրգվլովանի

41 Տես Մովսեսի ժերտոսի, էջ 72–138:

42 Տես Սուրբաթ Դավիթի-ձե, էջ 376:

43 Տես Զուանշերի, էջ 232: «Բարթիլիա Յխովրեբա»-ում Արչիլի նահատակության վերաբերյալ մի համառոտ երկ կա ընդգրկված, որը «Վրաց պատմահայր» Դևոնդ Ռուխսեցու գրչին է վերագրվում՝ Լեոնտի մրջվե, Գեմեծա Գեմեծոս և Դոմեթուլոս մոխամոս ճրիլոսի, «Ջերտոլոս Եջոջրեծ», 1-2, և. Կալեքիմջոլոս Գեմեծոս (Լեոնտի Մրովելի, Սուրբ և փառավորյալ նահատակ Արչիլի վկայաբանությունը, «Բարթիլիա Յխովրեբա», 1-2, հրատ. Ս.Կալեքիմջոլի), Թբիլիսի, 1955–1959, հատ. Ա., էջ 245–248:

44 Տես Ադոնց Ն. Գ., Բագրատունեաց փառքը, «Պատմական ուսումնասիրություններ», 1948, էջ 99:

45 Տես Սաղինյան Ա. Կ., նշվ. աշխ., էջ 132:

46 Սերբեոս, էջ 564:

(ծրցցլոցճճճճ — բառացի՝ «կլոր») տառատեսակներով. ԴԲ [GN], ԴԿԴ [GRE] կամ ԴԿԴ [GRG], ՆՓՆ [SP'NS] և ՆԵՊՇԲՈՆ [STEP'ANOS]⁴⁷:

Վրացերեն հապավումներով նշված առաջին երեք դրամները տիպաբանորեն նման են սասանյան Հորմիզդ/Որմիզդ Դ շահնշահի դրահմաններին: Ավելին, առաջին հապավումով մետաղադրամը հստակ թվագրվում է այս շահնշահի գահակալման է տարով՝ 585/6 թ., ինչի պատճառով սրանք հարկավոր է վերագրել վրաց առաջին գահերեց իշխան Գվարամ Ա-ին: Իսկ ինչ վերաբերում է հապավումների վերծանման արդյունքում ստացվող Գուրգեն՝ իրանական ծագումով հատուկ անվանը, ապա դա, ինչպես գիտենք, Գվարամ Ա-ի միջազգային ասպարեզում կիրառվող գահական անունն էր, քանզի վերջինս թեպետև ձևականորեն, սակայն մինչև կայսեր կողմից 589-ին հաստատվելը մնում էր Սասանյան Իրանի հպատակ:

Վրացերեն հաջորդ հապավումով և նույնի ամբողջական անունով դրամները ոչ միայն տիպաբանորեն են նման հաջորդ շահնշահ Խոսրով Բ Փարվեզի դրահմաններին. սրանց վրա հստակ երևում է Ստեփանոս անունը: Այնպես որ սրանք վերագրվում են Գվարամի որդուն և իշխանական գահին հաջորդած Ստեփանոս Ա Մեծին: Վրաց նյութ էրիսմթավարները դրամական էմիսիայով հավանաբար չեն զբաղվել: Համենայն դեպս այդպիսի տվյալներ հետազոտողների տրամադրության տակ չկան:

2. Աղուանից ժառանգական իշխանություն

Եթե պարսիկների դեմ «Քսանամյա պատերազմի» ավարտական փուլում բյուզանդական զենքի տարած հաղթանակները հնարավոր դարձրին Կոստանդնուպոլսից կախյալ Վրաց ինքնավար իշխանության ծնունդը, ապա նույն զենքի հաջորդ «Քսանհինգամյա պատերազմում» տարած հաղթանակի արդյունքում Քրիստոնյա Այսրկովկասում պիտի ստեղծվեր ևս մեկ ինքնավար իշխանություն: Սակայն Սասանյան Իրանի հերթական պարտությունից և դրան հաջորդող ներքաղաքական խոր ձգնաժամից (որի սկիզբ հանդիսացավ Խոսրով Բ Փարվեզի մահապատիժը 628-ի փետրվարի 29-ին⁴⁸) շտապեցին օգուտ քաղել հյուսիսկովկասյան խազարները:

Սրանք, Անանուն Կաղանկատուացու վկայությամբ, անմիջապես անցան Կովկասյան լեռները և նվաճեցին Վիրքն ու Աղուանքը⁴⁹: Սակայն շահնշահ Արտաշիր Գ-ի (628–629) կառավարման արդեն Բ տարում, որի սկիզբ է հանդիսանում, ըստ Անտիոքոս Սորատեզոսի, 629-ի սեպտեմբերը⁵⁰, ստիպ-

47 Մանրամասն տես **Капанадзе Д. Г.**, Грузинская нумизматика. М., 1955, с. 46–48; **Акопян А. В.**, Новое в грузино-сасанидской нумизматике: второй известный тип монет Гургена I, «Нумизматика и эпиграфика», 2011, вып. 18, с. 187–190:

48 Շահնշահի մահապատի հստակ ամսաթիվը հաղորդում է առ-Տարսիի Հիշան իբն Մուհամմադ անունով հեղինակավոր իրագեկողը՝ նրա թագադրումից ԼԸ. տարի և ԺԵ. օր անց (տես **at-Tabari**, ser. 1, p. 1045): Սասանյան Իրանում շահնշահական իշխանության ձգնաժամի վերաբերյալ տես **Howard-Johnston J.D., KOSROW II**, the last great king of the Sasanian dynasty (590 –628), «Encyclopædia Iranica Online» / <http://www.iranicaonline.org/articles/khosrow-ii> (մուտք՝ 11.01.2019):

49 Տես **Անանուն Կաղանկատուացի**, էջ 398–401: Այս դեպքերի համատեքստում իիշտակվում է Աղուանից կամ Առանի (պահլ. **Ārān**) մարզպանության վերջին կառավարչը: Դա Սենավշնասպն էր (պահլ. **Sem Gušnasp**), ով փախավ «ի կողմանս Պարսից»՝ ամենայն հավանականությամբ Տիգրան (տես նույն տեղում, էջ 401):

50 Տես **Антиох Стратиг**, էջ 65 և 64:

ված էին այստեղից հեռանալ⁵¹: Միննույն ժամանակ, «684 թուականի պատմութեան» տվյալներով՝ Աղուանքում հիմնադրվում է գահերեց իշխանի ինստիտուտը. Աղուանից առաջին իշխան է դառնում Վարազ Գրիգորը՝ Արտաշիրի սերնդից⁵², այլ կերպ ասած՝ Սասանյան արքայատոհմից:

Ըստ Պարթևստանի Միհրանյան ազնվական տան ծագումնաբանության, որը մեզ է ներկայացնում ժ դարավերջում «Պատմութիւն Աղուանից աշխարհի» եռահատոր երկը շարադրած հայ մատենագիր Մովսէս Դասխուրանցին⁵³, Վարազ Գրիգորը Վարդի (պահլ. **Wārd**)⁵⁴ որդին էր: Վերջինիս անունով էլ հեղինակավոր մատենագիրն ավարտում է Աղուանքում (Առան) կառավարած պարսից ծագումով ժառանգական մարզպանների ցանկը՝ ներկայացնելով այն ընթացքով ինչ և Բ գրքի իր հեղինակած ժէ գլխում («Վասն Միհրական տոհմին լինել ի Սասանեան Խոսրովու ցեղէն և լինել նախագահ Աղուանից տանս»), և իր հեղինակած Գ գրքի ԻԳ գլխում («Կրկնբանութիւն ազգաշար անուանց համառուտաբար»)⁵⁵: Ի դեպ՝ Առան մարզպանությունը Պարտավ կենտրոնով սասանյան վարչակազմը վերջնականապես ձևավորել էր 510-ին (կամ 523-ին⁵⁶)՝ վերացված Աղուանքի թագավորության տարածքից, որի կազմում էին 428-ից հետո ընդգրկված Մեծ Հայքի Արցախ և Ուտիք աշխարհները:

Մեր կարծիքով՝ Վարազ Գրիգորի գահերեց իշխանի պաշտոնն իրավական ձևակերպում ստացավ բյուզանդական կայսեր կողմից, ինչպես որ դատելի ունեցավ 589-ին հարակից Վիրքի պարագայում: Դրա օգտին են անուղղակիորեն վկայում վրացական աղբյուրները. խազարների կողմից 628-ին Աղուանքի հետ մեկտեղ Վիրքի վերոհիշյալ նվաճումից հետո «Քարթլիս Տխովրեբա»-ի մի շարք երկերում հանդիպում ենք Հերակլ (Էրակլ) կայսրին (Ուտյաց աշխարհի) Գարդման (Գարդաբանի) բերդում՝ Վարազ Գրի-

51 Տե՛ս **Անանուն Կաղանկատուացի**, էջ 410-414: Շուրջ հեռանալու պատճառ հանդիսացավ 603-ին Արևմտա-Թյուրքական խաբանությունում սկիզբ առած քաղաքացիական պատերազմը, որի արդյունքում վերջինիս եվրոպական ու հյուսիսկովկասյան տիրույթներում սկսվեց ձևավորվել նոր և լիովին ինքնուրույն Խազարական խաբանությունը: Մանրամասն տե՛ս **Артамонов М. И.**, История хазар, под ред. Л. Гумилева, Л., 1962, էջ 170-180; **Новоселъцев А. П.**, Хазарское государство и его роль в истории Восточной Европы и Кавказа, М., 1990, էջ 85-92:

52 Տե՛ս **Անանուն**, 684 թուականի պատմութիւն, էջ 809:

53 Մինչև վերջերս հայագիտությունում ընդունված էր գրել, թե Մովսէս Դասխուրանցին հեղինակել է այս գրական հուշարձանի միայն ավարտական Գ գիրքը, իսկ առաջին երկու գրքերը է դարի երկրորդ կեսին հեղինակել է ծնունդով Աջափնյա Աղուանքից ուն Մովսէս Կաղանկատուացի: Սակայն ժամանակակից գիտական տեսակետի համաձայն՝ «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկն ամբողջապես է պատկանում Մովսէս Դասխուրանցու գրչին, միայն թե վերջինս, Ջ-է դարերի պատմությունը շարադրելիս, այլ համառոտ երկերի հետ մեկտեղ բառացի արտագրել է պատմագրական ժանրի երեք համեմատաբար ընդարձակ ստեղծագործություններ, որոնց հեղինակները նշված դարերում ապրած համերկրացիներ էին: Այսօր առաջին բանաբաղված երկը պայմանականորեն կոչում են «Կենսք և վարք Վաչագանայ արքայի» (տե՛ս **Յակոբեան Ա. Հ.**, Անանուն, Կենսք և վարք Վաչագանայ արքայի, «Մատենագիրք Հայոց, հատ. Գ (Ջ դար)», Աթիլիաս, 2004, էջ 51-55), երկրորդը՝ «Վիրոյ կարողիկոսի Պատմութիւն»՝ վերագրելով այն է դարի Աջափնյա Աղուանքի Կաղանկատույք գյուղից ուն հեղինակի գրչին (տե՛ս **Յակոբեան Ա. Հ.**, Անանուն Կաղանկատուացին և իր երկը, «Մատենագիրք Հայոց, հատ. Գ (է դար)», Աթիլիաս, 2005, էջ 371-373), վերջապես, երրորդ երկը, ինչպես մի քանի անգամ հիշատակեցինք՝ «684 թուականի պատմութիւն» (տե՛ս **Յակոբեան Ա. Հ.**, Անանուն և 684 թուականի պատմութիւնը, «Մատենագիրք Հայոց, հատ. Ե (է դար)», Աթիլիաս, 2005, էջ 795-798):

54 Տե՛ս **Մովսէսի Կաղանկատուացու Պատմութիւն Աղուանից աշխարհի**, «Մատենագիրք Հայոց, հատ. ԺԵ (ժ դար)», Աթիլիաս, 2012, էջ 224-226, 417 (այսուհետև՝ **Պատմութիւն Աղուանից աշխարհի**):

55 Աղուանքում Միհրանյանների ժառանգական կառավարմանն է ժամանակին անդրադարձել հայտնի աղուանագետ Հ. Ս. Սվազյանը (տե՛ս **Հ. Ս. Սվազյան**, Աղվանքը և Միհրանյան տոհմը, «Լրաբեր» հաս. գիտ., 1980, N 9, էջ 91-101):

56 Տե՛ս **Յակոբեան Ա.**, Աղուանքում Արշակունեաց թագավորութեան անկման ժամանակի մասին «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Եր., 2007, հատ. XXVI, էջ 72-88:

գորի (Վարազ-Գրիգորի) իշխանական նստավայրում⁵⁷:

Այդ պատճառով նա պետք է, ինչպես Մովսէս Դաւիթբեկունցին է գրում, մկրտվեր Աղուանից Վիրոյ կաթողիկոսի (595–629) ձեռամբ⁵⁸: Ըստ Դավիթի որդի Սմբատի՝ Վարազ Գրիգորը (Վարազ-Գրիգորի) մկրտություն է ստանում Գարդման (Գարդաբանի) ժամանած Հերակլի (Էրակլ) ձեռամբ⁵⁹: Համենայն դեպս, դա հավասարագոր էր Միհրանյանների գրադաշտական տոհմում քրիստոնեությունը որպես ինքնիշխան կրոն հռչակելուն: Միաժամանակ անկարելի է լիովին բացառել և այն, որ Աղուանից առաջին գահերեց իշխանին Հերակլի կողմից 629-ի վերջում շտրկվել է բյուզանդական արքունիքի մի որևէ բարձրաստիճան տիտղոս, թեև դրա վերաբերյալ մեզ հասած սկզբնաղբյուրները լռում են:

Մենք բոլոր հիմքերն ունենք պնդելու, թե Աղուանից իշխանության տարածքը լիովին համապատասխանում էր նախկին Առանի մարզպանության տարածքին՝ կազմելով 72.204 քառ. կմ⁶⁰: Առանի վերջին մարզպան Սեմավչնասպի՝ Տիգրոն փախչելուց հետո, ինչի մասին գրել ենք ծանոթագրություններում, Վարազ Գրիգորը կարող էր իշխանական նստավայրը Գարդման բերդից քաղաքամայր Պարտավ տեղափոխած լիներ:

Կարծում ենք նաև, որ ի տարբերություն Վիրքի՝ Աղուանից վերածնված պետականության վաղ շրջանում հիմնադրվեց քաղաքական ինքնավարության ևս մեկ կարևորագույն ինստիտուտ՝ սպարապետի (պահլ. *spāhbed*), այսինքն՝ ռազմական վարչակազմի ղեկավարի հաստատությունը⁶¹: «684 թուականի պատմությունը» հաղորդում է, որ Վարազ Գրիգորը ներկայացրեց Պարսից վերջին արքա Հակերտին (Յազդեգերդ Գ, 632/3–651) իր որդի Ջևանշեբին, ում նա հաստատեց սպարապետի պաշտոնում⁶²:

Վարազ Գրիգորի դիմումը շահնշահին վկայում է այն մասին, որ Աղուանից իշխանը հասցրել էր կարճ ժամանակահատվածում իր բյուզանդացի սյուզերենին փոխարինել սասանյանով: Դա շատ տրամաբանական քայլ էր, եթե հաշվի առնենք Աղուանից աշխարհի աշխարհագրական հեռավորությունը Կոստանդնուպոլսից և, դարձյալ, ի տարբերություն Վիրքից, Բյուզանդական կայսրության հետ նրա սահմանի իսպառ բացակայությունը: Ահա թե ինչու Ջևանշեբը գրադաշտական պարսիկների և մահմեդական արաբների միջև տեղի ունեցած Կադիսիայի գլխավոր ճակատամարտում, որտեղ Իրանի ու Սասանյան արքայատոհմի ճակատագիրն էր վճռվում⁶³, իր ակտիվ մասնակցությունը բերեց Տիգրոնի կողմից:

Է դարի երկրորդ կեսի Աջափնյա Աղուանքից մեր հեղինակավոր անանուն հեղինակը նշում է այն ռազմական ուժը, որը թույլ չտվեց հազարա-

57 Տե՛ս Յոզգեցճո յճրօղոսն, էջ 72–138; **Ջևանշեբի**, էջ 225; **Սուրբաթ Դավիթիս-ձե**, էջ 375:

58 Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղուանից աշխարհի, էջ 226:

59 Տե՛ս **Սուրբաթ Դավիթիս-ձե**, էջ 375:

60 Առանի մարզպանության մակերեսը նույնպես վերականգնել է Սուրեն Երեմյանը (տե՛ս **Երեմյան Ս. Տ.**, նշվ. աշխ., էջ 116–120):

61 Վրաց իշխանությունում այդ ռազմական վարչակազմի կառավարումը մտնում էր էրիսմավարների լիազորությունների մեջ: 2-րդ դարի վերջերս Ա-ն անձամբ ղեկավարեց 589-ին Ատրպատական ներխուժած վրաց և հյուսիսկովկասյան ռազմական ուժերը:

62 Տե՛ս **Անանուն**, 684 թուականի պատմություն, էջ 810:

63 Դրա մասին մանրամասն տե՛ս **Աստարձեան Գ.**, Ընդարձակ, բնդհանուր արաբական պատմություն (2500 Ն.Ք.-1918), Պեյրոյթ, 1961, էջ 135–140; **Lewental D.G.**, QĀDESIYA, BATTLE OF, «Encyclopædia Iranica Online» / <http://www.iranicaonline.org/articles/qadesiya-battle> (մուտք՝ 11.01.2019):

ցիներին (արաբներին) այդ ճակատամարտում դյուրին հաղթանակ տանել. դա նրանց ախոյան պարսկական բանակի շարքերում Ջևանշեյրի՝ արիության ցուցաբերած զորախումբն էր՝⁶⁴: Հենց դրանով է պատմիչը բացատրում այն փաստը, որ ճակատամարտից հետո Հազկերտը (Յագդեգերդ) «ըստ զարավարաց կարգի տայր նմա նշանակա և փողս ազդեցութեան՝ երկու նիզակս ոսկիս և երկուս վահանս ոսկեքանդակս, զոր միշտ առաջի շրջեցուցանէին և նախամեծար քան զամենեսեան առնէին, ընդ մէջ անեալ գաւտի ոսկի՝ ընդէլուզեալ մարգարտով, և սուսեր ոսկեստրեայն, ապարանջս բազկացն և պսակ ցանկալի ի գլուխ նորա: Ետուն նմա և զանգապանս մարգարտով և գումարտակ նոյնգունակ: Շուրջ զպարանոցան ազուցին նմա արջմաթորս տորս չորիւք դրաւշակաւք և դրաստս սնդս մետաքսառէջս և ոսկեթեզան փարուագով»⁶⁵:

Եւ այսպէս Ջևանշեյրը ստացավ Տիգրոնից իշխանության ճոխ ու թանկարժեք պատվանշաններ: Դա տեղի ունեցավ Կադիսիայի ճակատամարտից հետո, որն իրաքցի պատմիչ Խալիֆա իբն Խայյատի (776/7–854)՝ Աբու ալ-Հասան անունով հեղինակավոր իրագեկողը թվագրում է Հիջրայի 15 թվականի Շավվալ ամսվա ավարտին երկու օր մնացած, այսինքն՝ 27-ին (=636-ի դեկտեմբերի 2-ին)⁶⁶: Սակայն «684 թուականի պատմութեան» հեղինակի տվյալներով՝ ճակատամարտը տեղի ունեցավ Հայոց Մեհեկան ամսում, իսկ ավելի հստակ՝ Սուրբ Ծննդյան օրը⁶⁷: Ստացվում է՝ 637-ի հունվարի 6-ին: Իր հաջորդող շարադրանքում հայագրի անանուն մատենագիրը Ջևանշեյրի պաշտոնը կոչում է ն՝ իշխանական, ն՝ սպարապետական, ուրեմն նա եկավ փոխարինելու իր հորը՝ Վարազ Գրիգորին, իշխանական գահին: Մինչդեռ Հ. Ս. Սվազյանը գտնում էր, որ Ջուանշիրը (Ջևանշեյր) 637-ին նշանակվել էր միայն Աղուանից սպարապետ, իսկ իշխանական պաշտոնը հորից ժառանգելու էր 642-ին⁶⁸՝ Նեհավենդի ճակատամարտում արաբների կողմից պարսիկներին հասցված հերթական պարտությունից հետո⁶⁹:

Ինչևէ, Ջևանշեյրը մնաց Պարսից արքայից արքայի հպատակ մինչև Սասանյան Իրանն ամբողջովին նվաճվեց մահմեդական արաբների կողմից 650-ական թվականներին: «684 թուականի պատմութիւնը» առանձին գլուխ ունի՝ թվով Ի և «Թուրք Ջևանշեյրի առ թագաւորն Յունաց Կոստանդին» խորագրով, որում ընթերցում ենք, թե ինչպէս այս նոր թագադրված Կոստանդ Բ կայսրը (641–668) ի պատասխան Աղուանից իշխանի թղթին «...իսկոյն հրամայէր գրել երդումնս և ունել համամիտ խաղաղութիւն: Եւ պարգևս մեծամեծս շնորհէր և գահոյս արծաթիս քանդակակերտ թիկամբք ոսկեզած, և հանդերձ ոսկեմանեալս և զիւրոյ անձինն մարգարտայեռն պատենիւք սուսեր: Եւ առնէ զնա

64 Անանուն մատենագիրը վկայում է նաև այն մասին, որ Վիրքում շարունակում էր իշխել վերոհիշյալ Ատրնեսեսը (Ադարնասեն), ով ժամանեց Աղուանք՝ այցելելու ճակատամարտում վիրավորված Ջևանշեյրին (տես **Անանուն**, 684 թուականի պատմութիւն, էջ 814–815):

65 Նույն տեղում, էջ 811–812:

66 Տես / ٧٨٣١ – ٦٨٣١، الخفاف، مقدم له اكرم ضياء العمرى، النجف، (The History of Khalifah ibn Khayyat, ed. by Akram Diya' al-Umari, Nagav, 1386–1387 A.H. / 1967 A. D.), էջ 102:

67 Տես **Անանուն**, 684 թուականի պատմութիւն, էջ 811:

68 Տես **Սվազյան Հ. Ս.**, Աղվանից իշխաններ Ջուանշիրի և Վարազ-Տրդատի իշխանության տարեթվերի հարցի շուրջը, «Լրարբեր» հաս. գիտ., 1978, N 11, էջ 108–110: Հմմ. նաև աղբյուրացի աղուանագետի կարծիքի հետ՝ **Мамедова Ф. Дж.**, Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н.э.–VIII в. н.э.). Баку, 1986, էջ 206:

69 Դրա մասին մանրամասն տես **Աստարձեան Գ.**, նշվ. աշխ., էջ 135–140; **Morony M.G.**, ARAB ii. Arab conquest of Iran, «Encyclopædia Iranica», 1986, vol. II, fasc. 2, p. 203–210:

պռոտոն պատրիկ և տայր բերել պատրկութեան և հիպատութեան և ապու-
հիպաքոսութեան և ստրատելատութեան և ելիստութեան հազար երկերիս
արանց պատիւ, զի որում ինքն կամեցի՝ շնորհեցէ և նա զայն»⁷⁰:

Մեր համոզմամբ՝ Զվանշէրի վերոհիշյալ թուղթը Կոստանդնուպոլիս կայս-
րին է ուղարկվել, երբ հայոց իշխաններն ու գործը 659-ին Թէոդորոս Ռշտու-
նու մահից հետո Համազասպ Մամիկոնեանի գլխավորությամբ, ինչպես որ
նախորդ ենթաբաժնում Սերէոսի խոսքերը մեջբերեցինք՝ «...հապճեպ երթևե-
կով հնազանդեցան ի ծառայութիւն թագաւորին Յունաց, հանդերձ միաբա-
նութեամբ իշխանացն և զարացն Աղուանից...»: Մանավանդ որ «684 թուա-
կանի պատմութեանը» հաջորդող ԻԲ գլուխը՝ «Կայսերն Յունաց գալ ի Պարսս
ի կոչել զՋնանշէր» խորագրով, սկսվում է «յինն և ի տասներորդի ամի թա-
գաւորութեանն իւրոյ Կոստանտիանոս՝ թոռն Հայրակղի» թվագրությամբ⁷¹,
որը համապատասխանում է 659/60-ին:

Վերջում հավելենք, որ մեր տրամադրության տակ չունենք նյութեր Աղո-
ւանից իշխանների կողմից մետաղադրամ հատելու վերաբերյալ, ինչպես
որ դա տեղի ունեցավ հարևան Վիրքում, ինչն անկասկած ինքնիշխանու-
թյան կարևորագույն դրսևորումներից էր: Սակայն սասանյան դրամների թո-
ղարկումը, որն իրականացնում էին Առանի մարզպանները Պարտավի
գլխավոր դրամահատարանում, ժամանակակից դրամագետների կարծիքով
և ոչ միայն նրանց, շարունակվեց նաև Աղուանքում Տիգրանի վարչակազմի
վերացումից հետո⁷²:

Ամփոփում

Ակնհայտ է, որ բյուզանդական իշխանությունները Տիգրանին նախկինում
պատկանող քրիստոնյա մարզպանություններում (Վիրքում և Աղուանքում)
ձևավորված «գահերեց իշխան» ազգային ինքնավարության ինստիտուտ-
ները, որոնց իրենք 589-ին և 629-ին, համապատասխանաբար, իրավական
ձևակերպում տվեցին, դիտարկում էին իբրև իրենց կայսրության վարչա-
կան կառավարման ընդհանուր համակարգի յուրահատուկ մի կառուցվածք:
Դրա օգտին են հստակորեն խոսում և՛ այն բոլոր բարձրաստիճան տիտ-
ղոսները բյուզանդական հիերարխիայում, որոնք կայսրերի կողմից շոպ-
լորեն շնորհվում էին այդ ազգային ինստիտուտների հիմնադիրներին, և՛
Կոստանդնուպոլսից նրանց ուղարկվող իշխանական ճոխ ու թանկարժեք
պատվանշանները: Հետևաբար, Վրաց և Աղուանից ժառանգական գահերեց
իշխանները Կոստանդնուպոլսում բացառապես դիտարկվում էին որպես
բյուզանդական վարչակազմի ներկայացուցիչներ՝ նշանակված Քրիստո-
նյա աշխարհի հյուսիսարևելյան՝ Այսրովկասյան առաջնագծում: Մինևույն
ժամանակ, նման փաստը բացարձակապես չէր խանգարում ժառանգական
այս երկու իշխանական տոհմերի ներկայացուցիչներին՝ Վիրքում Խոսրով-
յաններին, իսկ Աղուանքում՝ Միհրանյաններին, միջազգային ասպարեզում

70 Ասանուն, 684 թուականի պատմություն, էջ 817-818:

71 Տե՛ս նույն տեղում, էջ 819: Հմմ. Աօպյան Ա., О хронологии последних событий в «Истории 684 года», «Кавказ и Византия», 1988, вып. 6, էջ 24-36:

72 Տե՛ս Пахомов Е. А., О сасанидских монетных кладах, «Дневник Академии наук Азербайджанской ССР», 1945, т. 1, էձ 44-46, Хуршудյան Э. Ш., Армения и сасанидский Иран (историко-культурологическое исследование), Алматы, 2003, էջ 176-193:

վարել լիովին ինքնուրույն և հավասարակշռված քաղաքականություն:

Ստեփանոս Ա Մեծը, ով դեռ 591-ի վերջին էր հաստատվել կայսր Միրիկի կողմից որպես Բյուզանդական Իբերիայի կառավարիչ, 603-ից մինչև 628 թ. շարունակվող «Քսանհինգամյա պատերազմի» առաջին տարիներին, երբ Խոսրով Բ Փարվեզ Պարսից արքայից արքան հաղթանակներ էր տանում հույների հանդեպ, 614-ին շտապեց իր բյուզանդացի սյուզերենին՝ ի դեմս Հերակլ կայսեր, փոխարինել սասանյան շահնշահով: Այսպիսի «դավաճանությունը» թույլ տվեց Ստեփանոսին վերամիավորել Վիրքի բյուզանդական և իրանական հատվածները մեկ ընդհանուր իշխանության սահմանների ներքո՝ Տփղիս կենտրոնով: Դրա դիմաց սակայն նա շատ թանկ վճարեց՝ 627-ին ընկնելով բյուզանդական պատժիչ բանակի դեմ մարտերում և զրկվելով կայսեր կողմից իր իշխանությունը ժառանգաբար որդուն փոխանցելու հնարավորությունից:

Բյուզանդական հպատակությունը Վիրքում վերջին անգամ վերահաստատվեց Գվարամ Բ-ի օրոք միայն՝ 659-ից հետո: Վրաց այս էրիսմթավարը, ինչպես որ ժամանակին ինքնավար իշխանության հիմնադիր Գվարամ Ա-ն, բյուզանդական բարձրաստիճան «կուրապաղատ» տիտղոսին արժանացավ:

Վարազ Գրիգորը, ով 629-ի վերջում Հերակլ Ա-ի կողմից հաստատվեց Աղուանից գահերեց իշխանի պաշտոնում, ամենայն հավանականությամբ արժանանալով նաև բյուզանդական բարձրաստիճան մի որևէ տիտղոսի, 632/3-ից հետո ձանաչեց Պարսից նոր թագադրված Հազկերտ Գ արքայից արքայի գերիշխանությունը. արդյունքում նրա որդի Ջևանշէրը շահնշահի կողմից նշանակվեց Աղուանից սպարապետ: Սասանյան Իրանի կործանումից հետո միայն՝ մոտ. 659-ին, Աղուանից իշխան և սպարապետ Ջևանշէրը կամավոր ընդունեց կայսեր հպատակությունը՝ արժանանալով բյուզանդական մեկ այլ բարձրաստիճան՝ «պռոտոն պատրիկ» տիտղոսին:

Արսեն Կ. Շահինյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Մերձավոր Արևելքի և Հարավային Կովկասի երկրների վաղ միջնադարյան պատմությունն ու աշխարհագրությունը, Հայագիտության և Կովկասագիտության պատմությունը Սանկտ Պետերբուրգում և Ռուսաստանում: Ավելի քան 80 գիտական հրապարակումների հեղինակ է, այդ թվում՝ վեց մենագրությունների, չորս բուհական դասագրքերի և ձեռնարկների: Վեց գիտական դրամաշնորհների դեկավար է, այդ թվում Ռուսաստանի Դաշնության նախագահի:

a.shaginyan@spbu.ru

CREATING OF THE HEREDITARY PRINCIPALITIES IN THE CHRISTIAN MARZPANATES OF IRAN

At the last period of its conflict with Byzantium
(late 6th – early 7th century)

Arsen K. Shahinyan
Doctor of History
Saint Petersburg State University

Key words – Iranian marzpanate of Iberia (Varjan-Wiručān), Iranian marzpanate of Albania (Ārān), Byzantine-Iranian wars, Principality of Iberia (K‘art‘li), Principality of Albania (Ałuank‘), Ērismt‘avaris of K‘art‘li, iṣxans of Ałuank‘.

During the Byzantine-Iranian last two wars in history, via of 572–591 and 603–628, there have been fundamental changes in a political system of the Christian marzpanates, which had being existed since the partition of Anterior Asia between the Roman Empire and Sasanian Iran in 387. The marzpanates of Iberia (Varjan-Wiručān) and Albania (Ārān) belonging to Iran had gained a political independence under the presiding and hereditary princes and this fact was recognized by official Constantinople.

In this article for the first time in scientific literature, the author considers the genesis of the national institutes of the “presiding princes” in Iberia (K‘art‘li) and Albania (Ałuank‘) as a creation, on the political map of the Southern Caucasus (Transcaucasus) of the states, namely hereditary principalities, under the auspices of Constantinople. He also specifies the time of their genesis de facto and de jure, the borders of distribution of the sovereign power by those “presiding princes” and their residences under the conditions of the constant changing of the geopolitical situation in Anterior Asia.

The author shows that these national institutes of the “presiding and hereditary princes” – of Khosrovids (Chosroids) in Iberia, and Mihranids – in Albania, were legally issued by the Byzantine authorities in 589 and 629 respectively, considered as a peculiar structure in the general system of administrative management of the vast empire. All those high titles in the Byzantine hierarchy, which were awarded to the early representatives of these national institutes by emperors, and the magnificent insignias of the power sent them, are visually testify to it. Therefore, the “presiding princes” of Iberia and Albania were considered in Constantinople as the Byzantine administrators in the countries of the Christian Caucasus. At the same time, this fact did not prevent them to conduct quite independent and balanced foreign policy in any way.

Emperor of Maurice (582–602) recognized the first autonomous principality of K‘art‘li created directly at the borders of Byzantium at the beginning of the 570th, and appropriated the title of “curopalates” to its presiding prince (ērismt‘avari) of Guaram (Gurgen) I only in 589 – after having received an official application from Tbilisi.

The next ērismt'avari, Step'anos I the Great, who had been approved in 591 as the governor of the Byzantine Iberia by emperor of Maurice, during the so-called "Twenty-five years' war" of 603–628, when Khosrow II the Parviz won victories over the Greeks, occupied Jerusalem in 614, right then replaced his Byzantine suzerain of Heraclius I 610–641) with this Iranian. So Step'anos reunited the Byzantine part of Iberia with Mtskheta (Mc'xet'a) as its center and Iranian part of Iberia with Tbilisi (T'bilisi) as its center within the one principality.

The Byzantine sovereignty in K'art'li at the last time was approved only under Guaram II, after 659, when Muslims had finally erased Sasanian Iran from the political map of the Anterior Asia. This Iberian ērismt'avari also received the Byzantine imperial court title of "curopalates".

Varaz-Grigor was confirmed in 629 to the position of the presiding prince (išxan) of neighboring Ałuank' by Heraclius I, who had come to him to his residence in Gardman. This išxan also received, most likely, a high Byzantine court title. Nevertheless, in 632/3 Varaz-Grigor recognized the suzerainty of the last Persian king of kings of Yazdegerd III (632/3–651). As a result he achieved also an appointment of his son of Juanšēr by the šahanšah as a sparapet, i.e. supreme commander of the armed forces of Ałuank'.

Only after falling of Sasanian Iran, the išxan and sparapet of Ałuank' Juanšēr (636/7–681) became about 659 a citizen of the new emperor of Constant II (641–668), having received other high Byzantine imperial court title of so-called "proton patricius" and magnificent insignias of the power.

As one more major manifestation of the sovereignty in Iberia it is possible to consider stamping for the first time in the Georgian history of national coins by ērismt'avaris, and in Ałuank' – establishment of the independent institute of the military administration, via sparapet.

СТАНОВЛЕНИЕ НАСЛЕДСТВЕННЫХ КНЯЖЕСТВ В ХРИСТИАНСКИХ МАРЗПАНСТВАХ ИРАНА

На завершающем этапе противостояния с Византией
(конец VI – начало VII в.)

Арсен К. Шагинян
Доктор исторических наук
Санкт-Петербургский государственный университет

Ключевые слова – иранское марзпанство Иберия (Варджан-Вируджан), иранское марзпанство Албания (Аран), византийско-иранские войны, княжество Иберия (Қартли), княжество Албания (Ал‘уанк‘), эрисмтавари Қартли, ишханы Алуанка.

В эпоху двух последних в истории византийско-иранских войн, а именно 572–591 и 603–628 гг., произошли коренные изменения в политической системе христианских марзпанств, которая установилась после раздела переднеазиатского региона между Римской империей и Сасанидским Ираном в 387 г. Принадлежавшие Ирану марзпанства Иберия (Варджан-Вируджан) и Албания (Аран) приобрели политическую самостоятельность под властью первенствующих и наследственных князей. И данный факт был признан со стороны официального Константинополя.

Автор статьи впервые в научной литературе рождение в Иберии (Қартли) и Албании (Ал‘уанк‘) национальных институтов «первенствующих князей» рассматривает как появление на политической карте Южного Кавказа (Закавказья) накануне великих завоеваний мусульман наследственных княжеств под эгидой Константинополя. Он также уточняет время их фактического и юридического появления, границы распространения суверенной власти первенствующих князей и их резиденции в условиях постоянно меняющейся геополитической ситуации в Передней Азии.

Автор показывает, что эти национальные институты «первенствующих и наследственных князей» – Хосровидов (Хосровиани) в Иберии и Михранидов (Михрани) в Албании, хотя и были юридически оформлены византийскими властями в 589 и 629 гг., соответственно, но рассматривались, как своеобразные структуры в общей системе административного управления обширной империи. Об этом наглядно свидетельствуют все те высокие титулы в византийской иерархии, которые императорами присуждались первым представителям национальных институтов, а также инсигнии власти, высылаемые им. Следовательно, первенствующие князья Иберии или Албании считались византийскими администраторами на местах, однако данный факт никак не мешал им вести вполне самостоятельную и сбалансированную внешнюю политику.

Император Маврикий (582–602) признал первое автономное княжество Иберию (Қартли), возникшее непосредственно у границ Византии в начале 570-х годов и

присудил титул «куропалат» его первенствующему князю (эрисмтавару) Гуараму I только в 589 г., после получения из Тбилиси официального ходатайства.

Следующий эрисмтавари Степанос I Великий, назначенный в 591 г. в должности правителя Византийской Иберии императором Маврикием, в ходе так называемой «Двадцатипятилетней войны» 603–628, когда Хосров II Парвиз одерживал победы над греками, оккупировав Иерусалим в 614 г., тут же заменил своего византийского сюзерена в лице Ираклия I (610–641) на иранского шахиншаха. В результате Степанос воссоединил византийскую часть Иберии с центром в Мцхете и иранскую часть с центром в Тбилиси, в границах единого княжества.

Византийский суверенитет над Иберией (Картли) в последний раз был установлен только в период правления Гуарама II – после 659 г., когда мусульмане окончательно стерли с политической карты Передней Азии Сасанидский Иран. Этот картлийский эрисмтавари также получил высокий титул византийского двора «куропалат».

Вараз-Григор был назначен в должности первенствующего князя (ишхана) соседней Албании (Ал'уанк') императором Ираклием в 629 г., который прибыл к нему в резиденцию в Гардман. По всей видимости, этот ишхан также удостоился высокого придворного титула. Несмотря на это, в 632/3 г. Вараз-Григор признал сюзеренную власть последнего персидского царя царей Йездигерда III (632/3–651). В результате он добился от него назначения своего сына Джуаншера спарапетом, то есть верховным главнокомандующим вооруженными силами Албании (Ал'уанк').

И только после падения Сасанидского Ирана ишхан и спарапет Албании (Ал'уанк') Джуаншер (636/7–681) принял около 659 г. подданство нового императора Константа II (641–668), удостоившись другого высокого в Византии придворного титула – так называемого «протон патрикия», а также различных инсигний власти.

Еще одним важным проявлением суверенитета в Иберии (Картли) можно считать чеканку эрисмтаварами впервые в грузинской истории национальных монет, а в Албании (Ал'уанк') – создание самостоятельного от княжеской власти института военной администрации, а именно спарапета.

REFERENCES

1. **Abu Hanifa ad-Dinaweri**, Kitab al-Ahbar at-tiwal / Publié par V. Guirgass, Leiden, "E.J. Brill", 1888 (**In Classical Arabic**).
2. **Adonc N. G.**, Bagratuneac p'ar'qə, Patmakan usumnasirut'yunner / Ed. by A. Xondkarian, Paris, "Hrat. A. Ghukasiani", 1948, eg. 49–156 (**In Armenian**).
3. **Adontz N. G.**, Armenija v epoxu Justiniana. Politicheskoe sostojanie na osnove naхарarskogo stroja (Trudy po armjano-gruzinskoj filologii 11). SPb., "Tipogr. Imp. Akademii nauk", 1908 (**In Russian**).
4. **Akopjan A. H.**, O xronologii poslednix sobytij v "Istorii 684 goda", "Kavkaz i Vizantija", 1988, N 6, s. 24–36 (**In Russian**).
5. **Akopjan A. V.**, Novoe v gruzino-sasanidskoj numizmatike: vtoroj izvestnyj tip monet Gurgena I // Numizmatika i epigrafika, M., "Pamyatniki istoricheskoy mysli", 2011, N 18, s. 187–190 (**In Russian**).
6. **Ananun**, Kyanq yev' varq Vach'aganay arqayi, "Matenagirq Hayoc, hator G (Z dar)", Antilias, 2004, eg. 51–55 (**In Grabar**).
7. **Ananun**, 684 t'vakani patmut'yun, "Matenagirq Hayoc, hator E (E dar)", Antilias,

- 2005, eg. 799–895 (**In Grabar**).
8. **Ananun Kagh'ankatuaci**, Viroy kat'ogh'ikosi patmut'yun, "Matenagirq Hayoc, hator E (E dar)", dir. by Dr. Z. Yegavian, Antilias, "Armenian Catholicosate of Cilicia", 2005, eg. 375–414 (**In Grabar**).
 9. *Annales quos scripsit Abu Djafar Mohammed ibn Djarir at-Tabari: In 3 series / Ed. by M. de Goeje, Lugduni Batavorum, "E.J. Brill", 1879–1901 (ser. I, 1879–1898) (In Classical Arabic)*
 10. **Antiox Stratig**. Plenenie Ierusalima persami v 614 g. / Gruz. text issledoval, izd., per. i arab. izvlechenie prilozhil N. Marr (Trudy po armjano-gruzinskoj filologii 9), SPb., "Tipogr. Imp. Akad. nauk", 1909 (**In Russian and Classical Arabic**).
 11. **Artamonov M. I.**, Istorija xazar / Ed. by L. Gumilev, L., "Izd-vo Gosudarstvennogo Ermitazha", 1962 (**In Russian**).
 12. **Astarc'ean Toqt'or G.**, Əndardzak, əndhanur Arabakan patmut'yun (2500 N. Q. – 1918), Beirut, "tparan Sevan", 1961 (**In Armenian**).
 13. **Berdzenishvili N. A., Dondua V. D.**, Gruzija v VI v. // Očerki istorii SSSR, vol. 2: Krizis rabovladelcheskoj sistemy i zarozhdenie feodalizma na territorii SSSR (III–IX vv.) / Ed. by N. Druzhinin, M., "Izd-vo Akademii nauk SSSR", 1958, s. 254–265 (**In Russian**).
 14. **Bunijatov Z. M.**, Azerbajdzhan v VII–IX vv., Baku, "Izd-vo Akademii nauk Azerbajdzhanskoj SSR", 1965 (**In Russian**).
 15. **Dzhuansher Dzhuansheriani (Ĵuanšer Ĵuanšeriani)**, C'xovreba Vaxtang Gorgaslisa // K'art'lis C'xovreba / S. Kauxč'išvilis (Qauxč'išvili) gamoc'ema, vol. 1, T'bilisi, "Saxelmcip'o gamomc'emloba", 1955, 139–243 (**In Classical Georgian**).
 16. **Hakobyan A. A.**, Ananun Kagh'ankatucin yev' ir erkə // Matenagirq Hayoc, hator D (E dar), dir. by Dr. Z. Yegavian, Antilias, "Armenian Catholicosate of Cilicia", 2005, eg. 371–373 (**In Armenian**).
 17. **Hakobyan A. H.**, Ananun yev' 684 t'uakani patmut'iwnə // Matenagirq Hayoc, hator Ye' (E Dar), dir. by Dr. Z. Yegavian, Antilias–Lebanon, "Armenian Catholicosate of Cilicia", 2005, 795–798 (**In Armenian**).
 18. **Hakobyan A. H.**, Agh'vanqum Arsh'akuneac t'agavorut'e an kman zh'amanaki masin // The Countries and Peoples of the Near and Middle East, 2008, XXVI, eg. 72–88 (**In Armenian**).
 19. Hamar'ot patmut'iwn Vrac ənc'ayael Juansh'eri patmch'i, Venice, "Surb Gh'azar", 1884 (**In Armenian**).
 20. **Harutyunyan B. H.** Hayastani patmut'yan atlas (A mas), Ye'r., "Macmillan Armenia", 2004 (**In Armenian**).
 21. **Ibn Wadhih qui dicitur al-Ja'qubi.**, Historiae: In 2 pars / Ed. by M. Houtsma, Lugduni Batavorum, "E.J. Brill", 1883 (**In Classical Arabic**).
 22. **Kapanadze D. G.**, Gruzinskaja numizmatika. M., "Izd-vo Akademii nauk SSSR", 1955 (**In Russian**).
 23. **Leonti Mroveli**, Cameba cmidisa da didebulisa mocamisa Arč'ilisi // K'art'lis C'xovreba / S. Kauxč'išvilis (Qauxč'išvili) gamoc'ema, vol. 1, T'bilisi, "Saxelmcip'o gamomc'emloba", 1955, 245–248 (**In Classical Georgian**).
 24. Mok'c'evai K'art'lisai // K'art'lis C'xovreba / S. Kauxč'išvilis (Qauxč'išvili) gamoc'ema, vol. 1, T'bilisi, "Saxelmcip'o gamomc'emloba", 1955, 72–138 (**In Classical Georgian**).
 25. **Mamedova F. J.**, Politicheskaja istorija i istoricheskaja geografija Kavkazskoj

- Albanii (III v. do n. e.–VIII v. n. e.), Baku, "Elm", 1986 **(In Russian)**.
26. Movsesi Kagh'ankatuacvov Patmut'ivn Agh'uanic ash'xarhi "Matenagirq Hayoc, hator ZH'Ye' (ZH' dar)", Antilias, 2012, eg. 32–437 **(In Grabar)**.
 27. **Novoselcev A. P.**, Xazarskoe gosudarstvo i ego rol' v istorii Vostochnoj Evropy i Kavkaza. M., "Nauka", 1990 **(In Russian)**.
 28. **Patmut'ivn Sebeosi** // Matenagirq Hayoc, hator D (E dar), dir. by Dr. Z. Yegavian, Antilias, "Armenian Catholicosate of Cilicia", 2005, eg. 453–565 **(In Grabar)**.
 29. **Paxomov E. A.**, O sasanidskix monetnyx kladax // Dvevnik Akademii nauk Azerbajdzhanskoj SSR, 1945, N 1, s. 44–46 **(In Russian)**.
 30. **Shaginjan A. K.**, Armenija i strany Juzhnogo Kavkaza v uslovijax vizantijsko-iranskoj i arabskoj vlasti // Ser. "Vizantijskaja biblioteka. Issledovanija", Saint-Petersburg, "Aleteja", 2011 **(In Russian)**.
 31. **Shahinyan A. K.**, E dari Hayoc Ish'xanut'yan Inqnish'xanacumə // Haigazian Armenological Review, 2013, N 33, eg. 165–180 **(In Armenian)**.
 32. **Shahinyan A. K.**, Hayoc inqnavar ish'xanut'yan taracqn u sahmannerə E darum // Journal of the Society for Armenian Studies, 2011, N 20, eg. 55–68 **(In Armenian)**.
 33. **Svazyan H. S.**, Agh'vanic ish'xanner Juansh'iri yev' Varaz-Trdati ish'xanut'yan taret'veri harci sh'urjə // Lraber hasarakakan gitut'yunneri, 1978, N 11, eg. 108–115 **(In Armenian)**.
 34. **Svazyan H. S.**, Agh'vanqə yev' Mihranyan tohmə // Lraber, 1980, N 9, eg. 91–101 **(In Armenian)**.
 35. **Sumbat Davitis-dze (Davit'is je)**, C'xovreba da ucqeba Bagratoniant'a // K'art'lis C'xovreba / S. Kauxč'išvilis (Qauxč'išvili) gamoc'ema, vol. 1, T'bilisi, "Saxelmcip'o gamomc'emloba", 1955, 372–386 **(In Classical Georgian)**.
 36. The History of Khalifah ibn Khayyat / Ed. by Akram Diya' al-Umari, Nagav, 1386–1387 A.H. / 1967 A. D. (Tārīḥ Ḥalīfah bin Ḥayyāt, ḥaḡḡaqah wa-qaddama lah Akram Diyā' al-'Umarī. An-Naḡaf, 1387 H. / 1967 M) **(In Classical Arabic)**.
 37. Theophanis Chronographia // Corpus Scriptorum Historiae Byzantinae / Ed. I. Classeni, Bonnae, "Impesis ed. Weberi", 1839–1841 **(In Byzantine Greek)**.
 38. **Xurshudjan E. Sh.**, Armenja i sasanidskij Iran (istoriko-kulturologičeskoe issledovanie). Almaty, Tipogr. "Print-S", 2003 **(In Russian)**.
 39. **Ye'remyan S. T.**, Hayastanə əst "Ash'xarhacoyc"-i (Pordz' VII dari haykakan qartezi verakazmut'yan zh'amanakakic' qartezagrman himqi vra), Ye'r., "Haykakan SSH Git. Akad. hrat.", 1963 **(In Armenian)**.
 40. **Ye'p'esosi Hovhan Episkoposi Ekegh'ecakan Patmut'yun** // Otar agh'byurnerə Hayastani yev' Hayeri masin, hator 8, Asorakan agh'byurner, hator I / Transl. by H. G. Melkonyan, Ye'r., "Haykakan SSH Git. Akad. hrat.", 1976, eg. 383–460 **(In Armenian)**.